

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Քահանայն ի չայն տեսնազրեալ զիսկն եւ տարածեալ զճեռս, ասասցէ.

✠ **Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն:**

Վասն սրբուհոյ Աստուածածնին, Տէր, ընկալ զաղաչանս մեր, եւ կեցոյ զմեզ:

Սարկաւազն. Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի, եւ գթացեալ կեցուցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Քաւանայն. Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց, (եւ առաջ շնորհիւ, կամ եւ որոց այսօր է յիշատակ) լուր մեզ Տէր եւ ողորմեա, ներեա, քաւեա եւ թող զմեզս մեր: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ձեռնամաճ խոնարհեալ առ խորանն եւ ժողովրդեան, ասէ.

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, եւ սրբուհոյ Աստուածածնին, եւ առաջի ամենայն սրբոց, եւ առաջի ձեր, Հայրք եւ եղբարք, զամենայն մեղս զորս գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, եւ ամենայն մեղօք՝ զոր գործեն մարդիկ, մեղա՛յ, մեղա՛յ: Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վասն իմ Աստուծոյ զթողութիւն:

Ս. Ողորմեսցի քեզ Աստուած Հօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմնու, եւ յառաջակայէն փրկեսցէ զքեզ, եւ Հաստատեսցէ յամենայն գործս բարիս, եւ Հանգուցէ զքեզ ի Հանդերձեալ կեանսն:

✠. **Ամէն:**

Քահանայն ողղեալ խաչակրեալ զժողովուրդն՝ ասելով.

† Ազատեսցէ եւ զձեզ մարդասերն Աստուած եւ թողցէ զամենայն յանցանս ձեր: Տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս: Ուղղեսցէ եւ զառաջիկայ կեանս ձեր, շնորհօք սուրբ Հոգւոյն, Հղօրն եւ ողորմածն. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Ս. Յիշեսցի՛ր եւ զմեզ առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Ք. Յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Ս. Դատ արա ինձ, Աստուած, եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Ք. Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս:

Ս. Դու Աստուած Հղօրիչ իմ ես, ընդէ՛ր մոռացար զիս. ընդէ՛ր տրտում գնամ ես ի նեղել թշնամոյ իմոյ:

Ք. Առաքեա Տէր զոյս քո եւ զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ եւ Հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

Ս. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Ք. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուա՛ծ, Աստուած իմ:

Ս. Արդ, ընդէ՛ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՛ր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա՛ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Քահանայն փեսոնագրեսցէ զիկֆն եւ կայցէ շեռեամբ.

† Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Ս. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Օրհնեսցուք զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղոջ փառաբանութեան, եւ երգել զերգս Հոգեւորս: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քահանայն փարսածեալ զճեռս՝ ելցէ ընդ աստիճանս, եւ համբուրեսցէ զսեղանն ասելով.

Ք. Ի յարկի սրբութեան եւ ի տեղոջ փառաբանութեան, Հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս. առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս, խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զսուրբ, զհրաշալի եւ գլաղթող Տէրութիւնդ քո...

կամ Յայտնութիւնդ եւ Մկրտութիւնդ քո

կամ Գալուստդ քո քառասնօրեայ ի տաճարն

կամ Մարդեղութիւնդ քո, ի տօնի Աւետման Մօր քոյ եւ Կուսի

կամ Գալուստդ քո (Երուսաղէմ)

կամ Յարութիւնդ քո

կամ Համբարձումդ քո

կամ Գալուստ Հոգւոյդ Սրբոյ

կամ Տէրութիւնդ Ամենասուրբ Երրորդութեանդ

կամ Պայծառակերպութիւնդ քո

կամ Գալուստդ քո, ի Փոխումն Մօր քո եւ Կուսի

կամ Տէրութիւնդ քո, ի տօնի Ծննդեան Մօր քո եւ Կուսի

կամ Յարութիւնդ քո, ի տօնի Ծննդեան Մօր քո եւ Կուսի կամ Խաչդ քո

կամ Տէրութիւնդ քո, ի տօնի Ընծայման Մօր քո եւ Կուսի

կամ Յարութիւնդ քո, ի տօնի Ընծայման Մօր քո եւ Կուսի

կամ Յարութիւնդ քո, ի տօնի Անարատ Յղութեան Մօր քո եւ Կուսի

կամ Յայտնութիւնդ քո ի տօնի Անարատ Յղութեան Մօր քո եւ Կուսի

կամ Ծնունդ քո

օրհնեմք եւ փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԾԱՅՈՒՄՆ

Ս. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ, կեցո եւ ողորմիա:

Քահանայն քայտալ զսկիհն՝ խաչակնքեսցէ զնշխարն ասելով.

Ք. Օրհնութիւն եւ փառք Հօր † եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ այսա դիցէ ի վայր զմաղպմայն, ասելով ի ծածուկ.

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Ապս մաքրեալ զբաժակն, քահանայն եկեսցէ ի շախ եղգիր սեղանոյ: Ապսաւորն մաքուրսցէ զժամանոց գիւնոյ: Քահանայն խաչանիշ արկցէ ի սկիհն զգիւնիս ասելով.

Յաղագս յիշատակի փրկագործ անօրէնութեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Եկեալ ի միգալտեղի սեղանոյ, մաքրեսցէ զներքին շրթունս բաժակին, եւ եղեալ զմաղպմայն ի վերայ սկիոյ՝ խաչակնքեսցէ եւ լուրիւրեսցէ, եւ այսա ճեւաջուրսցէ զնշան խաչի, ասելով.

Ք. Աստուած, Աստուած մեր, որ զերկնաւոր Հացդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ եւ կեցուցիչ եւ բարերար, օրհնել եւ սրբել զմեզ: Ինքնին դու Տէր օրհնեա † եւ այժմ զառաջագրութիւնս զայս: Ընկալ զսա յերկնային քո սեղանդ: Յիշեա որպէս բարերար եւ մարդասէր զմատուցողս եւ

վասն որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապարտ պաշեա ի քաճանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց: Չի սուրբ եւ փառաւոր է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացո Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աստէն խաչակնքեսցէ զրեծայն՝ ասելով.

Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն Հովանի լիցի ի վերայ քո:

ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ

Դպիրքն. Բարեխօսութեամբ Մօր քոյ եւ Կուսի՝ ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից: Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զԵկեղեցի արեամբ քո, Քրիստոս. եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց եւ մարգարէից, սուրբ վարդապետաց: Այսօր ժողովեալ դասք քաճանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց, խոնկ մատուցանեմք առաջի քո, Տէր, յօրինակ ըստ Հոռմն Չաքարիաս: Ընկալ առ ի մէջ զինկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, զՆոյի եւ զԱբրահամու: Բարեխօսութեամբ վերին քո զօրաց՝ միշտ անշարժ պաշեա զԱթոռ Հայկազնեայց:

Ք. Խոնկ մատուցանեմ առաջի քո, Քրիստոս, բուրումն Հոգեւորական. ընկալ ի սուրբ, յերկնային եւ յիմանալի քո մատուցարանդ ի Հոտ անուշից, եւ առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս եւ զպարգեսս Հոգւոյդ սրբոյ: Եւ քեզ փառս մատուցանեմք ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյդ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԱՄԱՄՈՒՏ

Ապա քահանայն համբուրեալ զսեղանն՝ ի ջայն քեռտեազրեսցէ զիկնքն:

† Օրհնեալ թագաւորութիւն Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ջեռեանած ասասցէ զժամամուր առոր պարշաճի.

Ս. Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած, մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն, փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն, կեցո զմեզ:

Ս. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո եւ ողորմեա:

Քահանայն քեռտեազրեալ զիկնքն՝ դարձցի եւ խաչակնքեսցէ զժողովուրդն.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ † Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

† Խաղաղութիւն ամենեցուն:

Ս. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Ք. Աստուծոյ երկրպագեսցուք:

Ս. Առաջի քո, Տէր:

Քահանայն ցարածեսչ զչեսոս ասասցէ.

Ք. Տէ՛ր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է, եւ փառքդ անՀասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, եւ գթութիւնդ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեան քում, նայեա ի ժողովուրդս քո եւ ի տաճարս յայս սուրբ: Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն: Չի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Պ ծածուկ.

Որ Հասարակաց զայս եւ միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, եւ զերկուց եւ զերից միաձայնելոց յանուն քո զինդրուածս պարգեւել խոստացար: Դու եւ այժմ՝ զճառայից քոց զինդրուածս՝ առ ի յօգուտն կատարեա, շնորհելով յայսմ յաւիտենիս զգիտութիւն քումդ ճշմարտութեան, եւ ի Հանդերձեալն զկեանսն յաւիտենականսն պարգեւելով: Չի բարերար եւ մարդասէր ես Աստուած. եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տէ՛ր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զգասս եւ զինուորութիւնս Հրեշտակաց եւ Հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառաց քոց: Արա այժմ՝ ընդ մոտս մեր մտանել եւ սրբոց Հրեշտակաց, եւ լինել պաշտօնակից մեզ եւ փառաբանակից քումդ բարերարութեանդ:

ԵՐԵՔՍԻԲԵԱՆ ԵՒ ԹԱՓՕՐ ՍՈՒՐԲ ԱԻԵՏԱՐԱՆԱԻ

Ք. Չի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Ս. Պռօսխումէ:

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ: (Երիցս)

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ: (Երիցս)

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ ծնար եւ յայտնեցար, ողորմեա մեզ: (Երիցս)

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ եկիր եւ գալոցդ ես, ողորմեա մեզ: (Երիցս)

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ մարմնացար վասն մեր, ողորմեա մեզ: (Երիցս)

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ Համբար ձար փառօք առ Հայր, ողորմեա մեզ: (Երիցս)

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ եկիր եւ Հանգեար յառաքեալն, ողորմեա մեզ: (երիցս)

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնե ցար ի Թաբոր լերինն, ողորմեա մեզ: (երիցս)

Դ. Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ, որ եկիր ի փոխումն Մօր քոյ եւ Կուսի, ողորմեա մեզ: (երիցս)

ՔԱՐՈՉ ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ

Ս. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ս. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ Հաստատութեան սրբոյ Եկեղեցոյ, զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ս. Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ս. Վասն սրբազան Պապին մերոյ Տեառն (այս անուն) կենաց եւ փրկութեան Հոգւոյ նորին, զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ս. Վասն ամենապատիւ Պատրիարքին մերոյ Տեառն (այս անուն) Կաթողիկոսի կենաց եւ փրկութեան Հոգւոյ նորին, զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ս. Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւազաց, դպրաց եւ ամենայն ուխտի մանկանց Եկեղեցոյ, զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ս. Վասն Հոգւոցն Հանգուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ Հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա: Յիշեա, Տէր, եւ ողորմեա: Տէր, ողորմեա: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք: Տէր, ողորմեա: Տէր, ողորմեա: Տէր, ողորմեա:

Քահանայն ի ծածուկ.

Ք. Աստուած սուրբ, որ ի սուրբս Հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, եւ քերովբէք փառաբանեն, եւ ամենայն երկնային զօրութիւնքն քեզ երկիր պագանեն:

Որ ի չգոյէ ի գոյ ածեր զամենայն արարածս: Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում եւ նմանութեան, եւ ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, եւ ուսուցեր

խնդրել զիմաստութիւն եւ զզգօնութիւն. եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր ի վերայ նորա զապաշխարութիւն փրկութեան:

Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ եւ զանարժան ծառայքս քո ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, եւ զօրինաւոր երկրպագութիւն եւ զփառաբանութիւն մատուցանել քեզ:

Դու Տէր, ընկա՛լ ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբ բեան օրհնութիւնս, եւ պաշէա՛ զմեզ քոյին քաղցրութեամբդ:

Թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ: Սրբեա զՀոգի, զմիտս եւ զմարմինս մեր. եւ շնորհեա ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց. բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան:

Չի սուրբ ես, Տէր Աստուած մեր, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քապիարարած.

Տէ՛ր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս, եւ ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում: Չգթութիւն քո առաքեա ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս, որք ակն ունին առ ի քէն առատ ողորմութեանդ:

Ձեռնամած ի ջայն.

Չի ողորմած եւ մարդասէր ես, Աստուած գոլով, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Ասացեալ ըստ խորհրդոյ աւուրն Ասղմոսն, ընթերցցի յգիրսն առաքելակալն եւ ապա զաւուր պարչաճի յԱլեղուիս:

Ս. Ալէլուիա, Օրթի:

Քահանայն դարչեալ՝ խորհրդարարիւն խաչակնքեսցէ զժողովուրդն.

† Խաղաղութիւն ամենեցուն:

Ս. Եւ ընդ Հոգւոյդ քում: Երկիւղածութեամբ լուարուք:

Ք. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ (Մատթէոսի կամ Մարկոսի կամ Ղուկասու կամ Յովհաննու):

Ս. Փառք քեզ, Տէ՛ր Աստուած մեր: Պաօսխումէ: Ասէ Աստուած:

Քահանայն տեսնեազրեալ զիկն, ընթերցցի զաւերարանն, եւ յաւարտելն համբուրեալ եւ խիտալ՝ դարչցի առ խորանն:

Ս. Փառք Քեզ, Տէր, Աստուած մեր:

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

Քահանայն եւ ժողովուրդն միասնական ասացեն զիսուսրոյանութիւն հաւաքոյ. Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի՝ երեւելեաց եւ աներեւութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յեութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղել յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն Սրբով: Որով էառ մարմին, Հոգի եւ միտս, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որոյ թագաւորութեանն՝ ոչ գոյ վախճան: Հաւատամք եւ ի սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն: Որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալն եւ բնակեցաւ ի սուրբսն: Հաւատամք եւ ի մի միայն յընդհանրական եւ յառաքելական սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քառու թիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանն յաւիտենից, Հոգւոց եւ մարմնոց: Յարքայութիւնն երկնից: Եւ ի կեանն յաւիտենականս:

Եւ համբուրեալ զսեղանն՝ պեռնակարեաց զիկֆն, ասելով.

Ք. Իսկ մէք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով սրբոյ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն Հօր **✠** եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ա. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ա. Եւ եւս Հաւատով աղաչեսցուք եւ ինդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ ի ժամուս պաշտաման եւ աղօթից:

Դ. Կեցո, Տէր: Շնորհեա, Տէր: Շնորհեա, Տէր: Տէր, ողորմեա: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք: Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա:

Տարածեալ չեռօք ասացէ ի ծածուկ.

Ք. Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ, եւ առատ պարգեւօք բարերարութեան քոյ: Որ դու քոյին կամաւ ի ժամուս յայսմիկ Համբերեցեր չարչարանաց, խաչի, եւ մահուն՝ յաղագս մեղաց մերոց. եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս արա եւ զմեզ Տէր, աղաչեմք զքեզ՝ աստուածային պարգեւացդ, թողութեան մեղաց եւ ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ:

Ապա ի չայն չեռնանաձ, եւ դարչեալ՝ խաչակնիքեաց զժողովուրդն.

Որպես զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

✠ **Խաղաղութիւն ամենեցուն:**

Ս. Եւ ընդ Հոգւոյդ քում:

✠. **Աստուծոյ երկրպագեսցուք:**

Ս. Առաջի քո, Տէր:

Ապա քրարածեալ զչեռս.

✠. **Խաղաղութեամբ քով, Քրիստոս փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո զմեզ եւ աներկիւղ պաշտէս յամենայն չարէ: Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկիր պագանեն: Վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Տեսնեալքուցէ զիսկն.

✠ **Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս:**

Ս. Ամէն:

Քահանայն կողմնակի դարչեալ՝ խաչակնքեալց զժողովուրդն.

✠ **Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ:**

Ս. Ամէն:

Ս. Մի ոք յերախայից, մի ոք ի թերահաւատից, եւ մի ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս:

ՀԱՒԱՏԱՅԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳ

Դ. Մարմին տէրունական, եւ արին փրկչական կայ առաջի: Երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց:

Քայագլուխ եւ չեռնամած իոնարհեցուցեալ զգլուխն, զչեռս յեցուցէ ի ծնօր սեղանոյն եւ աղօթեսցէ ի ծածուկ.

✠. **Ոչ ոք արժանի է յրմբունելոցս մարմնաւոր ախտիք եւ ցանկութեամբ մատչել ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց. քանզի պաշտել զքեզ՝ մեծ եւ ահաւոր երկնաւոր զօրութեանցդ իսկ է: Սակայն վասն անչափ բարերարութեան քոյ, անպարագրելի Բանդ Հօր, եղեր մարդ, եւ քաջանայապետ մեր երեւեցար: Եւ իբր Տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան եւ անարին զենման զքաջանայութիւն աւանդեցեր մեզ: Վասն զի դու ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց: Որ ի վերայ քերովբեական աթոռոյ բազմիս, սերովբեից Տէր եւ թագաւոր Իսրայելի: Որ միայն սուրբ ես, եւ ի սուրբս Հանգուցեալ: Աղաչեմ զքեզ,**

միա՛յն բարերար, նայեա յիս ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս քո, եւ սրբեա զՀոգի եւ զմիտս իմ՝ յամենայն պղծութենէ չարին: Եւ բաւականացո զիս զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ՝ զբաճանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, եւ քաճանայագործել զքո անարատ մարմինդ եւ զպատւական արիւնդ:

Առաւել եւս խոնարհեացի երկրպագութեամբ.

Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ, մաղթեմ՝ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, եւ մի՛ մերժեր զիս ի ծառայից քոց:

Անրայուցեալ սքօղն եւ սկափարիչն, եւ կաշեալ սկիհին նուիրեսցէ.

Այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս՝ յինէն ի մեղուցեալ եւ յանարժան ծառայէս քումմէ: Վասն զի դու ես՝ որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս եւ տաս, Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք, Հանդերձ անսկիզբն Հարբդ, եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւովդ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ս. Եւ եւս Հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, ահիւ. մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ Հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան: Կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, եւ գտցուք զողորմութեան զշնորհս, յաւուր յայտնութեան եւ ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, կեցուցէ եւ ողորմեսցի:

Դ. Կեցո, Տէր, եւ ողորմեա:

ԸՆԾԱՅՎԵՐՈՒՄՆ

Ապա դիպէ զմաղղմաշն առագի իւր, եւ սկափարիչն անցէ ի վերայ բաժա կիւն, եւ շուսացի սքեռս ի ջախ նդգեր սեղանոյ, ասելով.

Ք. Լուացայց սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով:

Քապիարարած ասասցէ պաղօթս.

Տէր Աստուած զօրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զբնաւս ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր: Որ եւ զմեր զճողեղէն բնութիւնս այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագիսս, ընկալ առ ի մէջ զառաջագրութիւնս զայս: Եւ աւարտեա զսա ի խորհրդականութիւն մարմնոյ եւ արեան Միաճնի քոյ: Դեզ թողութեան մեղաց պարգեւեա ճաշակողացս զՀացս զայս եւ զբաժակս:

Ջեռնամած ի չայն.

Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր՝ միանգամայն եւ Հոգւոյդ սրբոյ՝ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Համբուրեալ զսեղանն խաչակիւփեսցէ զժողովորդն.

✠ Խաղաղութիւն ամենեցուն:

Ս. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Ք. Աստուծոյ երկրպագեսցուք:

Ս. Առաջի քո Տէր:

Քահանայն շեռնամած ասասցէ.

Ս. Ողջո՛յն տուք միմիանց, ի Համբոյր սրբութեան: Եւ որք ոչ էք կարող Հաղորդել աստուածային խորհրդոյս եւ առ դրունս էք, աղօթեցէ՛ք:

Ս. Քրիստոս ի մէջ մեր յայտնեսցի, Որ Էնն Աստուած աստ բազմեսցաւ: Խաղաղութեան ձայն Հնչեցաւ, Սուրբ ողջունիս Հրաման տուաւ: Եկեղեցիս մի անձն եղել, Համբոյրս յօգ լրման տուաւ: Թշնամութիւնն Հեռացաւ, Սէր ընդՀանուրս սիրեցաւ: Արդ՝ պաշտօնեայք, բարձեալ զձայն, Տուք օրհնութիւն ի մի բերան, Միասնական Աստուածութեանն, Որում սրովբէքն են սրբաբան:

ԿԱՆՈՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Քահանայն զարածեալ զչեռս.

Ք. ԱՀիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք, եւ նայեցարուք զգուշութեամբ:

Ս. Առ քեզ, Աստուած:

Ք. Պատարագ Քրիստոս մատչի Գառն Աստուծոյ:

Ս. Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Քահանայն զեռնագրեսցէ զիւկն, եւ շեռնամած կողմնակի դարչեալ՝ խաչակիւփեսցէ զժողովորդն.

Ք. Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր ✠ եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Ս. Ամէն. եւ ընդ Հոգւոյդ քում:

Քահանայն զարածեալ զչեռս՝ անբարչցէ զաչս ի խաչելորթիւնն՝ յասելն միայն.

Ք. Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:

Ս. Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:

Ք. Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ:

Ս. Արժան եւ իրաւ:

Քահանայն չեռնամած աղօթեսցէ ի ծածուկ.

Ք. Արժան է ստուգապէս եւ իրաւ ամենայորդոր փութով միշտ երկիր պագանելով փառաւորել զքեզ, Հա՛յր ամենակալ: Որ քոյին անզննելի եւ արարչակից Բանիւղ՝ զանիծիցն բարձեր զկրճիմն: Որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի՝ սեպհականեաց զհաւատացեալս ի քեզ: Եւ զննելի բնութեամբ ըստ ի Կու սէն տնտեսութեան հաճեցաւ բնակել ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ զերկիրս երկին արար: Վասն զի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ եւ յանմատոյց լուսոյ աստուածութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յազազս մերոյ փրկութեան, Հնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս:

Զերկրոսին չեռս եղեալ ի վերայ սկիոյ ասասցէ ի չայն.

Ք. Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ համարձակապէս գոչելով՝ աղաղակել ընդ նոսին եւ ասել.

Ս. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քո, օրհնութիւն ի բարձունս: Օրհնեա՛լ որ եկիր եւ գալոցդ էս անուամբ Տէառն. ովսաննա ի բարձունս:

ԿԱՆՈՆ

Երիցս խաչակնքեսցէ ի վերայ ընծայից եւ բազկարարած աղօթեսցէ ի կիսածածուկ.

Ք. Սուրբ †, սուրբ †, սուրբ † եւ ճմարտապէս եւ ամենասուրբ. եւ ո՛վ որ պանծացի բովանդակել բանիւ զքո ի մեծ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս: Որ եւ անդէն իսկ ի նախնումն զանկեալն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր՝ մարգարէիւք, օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ եւ ստուերակերպ երնջոցն մատուցմամբ: Իսկ ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զգատակնիք, էտուր մեզ զՈրդիդ քո միածին՝ պարտապան եւ պարտս, զէնումն եւ օժեալ, գառն եւ երկնաւոր հաց, քահանայապետ եւ պատարագ: Վասն զի ինքնդ է բաշխող, եւ նոյն ինքն բաշխի ի միջի մերում միշտ անծախապէս: Վասն զի եղեալ հաւաստեալ եւ առանց ցնորից մարդ, եւ անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածածին եւ ի սուրբ Կուսէն Մարիամայ: Հանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց, եւ յաշխարհակեցոյց եւ յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչն:

ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄ

Աստէն պարապես չի վայր մի ի հոգեւոր խորհրդածութիւնս. ապա առեալ վնշխարն խաչակնքեսցէ, եւ ամբարջցէ զաչորն ի խաչելութիւն՝ ասելով ի ծածուկ.

Ք. Առեալ զՀացն ի սուրբ, յաստուածային, յանարատ եւ ի պատուական ձեռս իւր. **†** օրհնեաց, գոհացաւ, եբեկ, ետ իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով.

Առէ՛ք կերէ՛ք, այս է մարմին իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Ս. Ամէն:

Քահանայն եղեալ զսուրբ մարմինն ի մաղպմայն՝ ծուկը կրկնեաց. ապա բացեալ զբաժակն եւ կաշեալ՝ խաչակնքեաց, եւ ասացէ ի ծածուկ.

Նոյնպէս եւ զբաժակն առեալ, **† օրհնեաց, գոհացաւ, էարբ, ետ իւրոց ընտրեալ, սուրբ եւ բազմեալ աշակերտացն՝ ասելով.**

Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ Ուխտի, որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Ս. Ամէն:

Յիշատակ եւ նուիրումն

Դ. Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասն մեր, պարտապան պարտեաց մերոց: Հեղմամբ արեան նորա՝ աղաչեմք զքեզ, ողորմեա քո բանաւոր **Հօտիս:**

Քահանայն եղեալ զսկիին ի վայր՝ ծուկը կրկնեաց. եւ առեալ զմաղպմայն՝ դիպէ ի վերայ բաժակին, ասելով ի ծածուկ.

Ք. Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ քո **Միածին:** Եւ իջեալ ի ստորին վայրս մահու մարմնովն՝ զոր ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ: Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ Հզօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ **Աստուած, զԱստուածդ, կենդանեաց եւ մեռելոց:**

Երկրորդմբ չորս բարչրա ցուցեալ գոյցն ինչ վնուրսն, ճեւացուցէ ևնքօ վնշան իւսչի ի վերայ մարմնակաշիկն՝ ասելով.

Եւ արգ՝ մեք, **Տէ՛ր**, ըստ այսմ՝ Հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ եւ արեան **Միածնի** քոյ, յիջեմք զգորա՝ որ վասն մեր զփրկագործ չարչարանն, զկենդանատու խաչելութիւնն, զերեքօրեայ զթաղումն, զերանելի յարութիւնն, զաստուածապէս Համբարձումն, զնստելն ընդ աջմէ քո, Հա՛յր, զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք եւ օրհնեմք:

Չնծայեաց ի չայն.

Ք. Եւ զքոյս ի քոյոցս քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Ս. Յամենայնի օրհնեալ ես **Տէր**, օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէս, աղաչեմք զքեզ, **Տէ՛ր Աստուած մեր:**

Քահանայն եղեալ զսկիհն ի վայր եւ զմաղպմայն՝ կափուսցէ զբաժակն, եւ ծուկը կրկնեալ՝ ցարածեսցէ զչէռս եւ աղօթեսցէ ի ծածուկ.

Ք. *Չքեզ արդարեւ, Տէ՛ր Աստուած մեր, գովեմք եւ զքէն գոհանամք Հանապագ: Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեան՝ յորոց յոյժ թափուր եմք եւ միշտ ունայն գտանիմք Հանապագ: Այլ ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ՝ Համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն մարմնոյ եւ արեան Միաճնի քոյ Տեառնդ մերոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Ջչէռս շորք ածեալ զրեծայիւժ, կողմակի դարչեալ՝ խաչակնքեսցէ զժողովուրդն ի չայն.

✝ *Խաղաղութիւն ամենեցուն:*

Ս. *Եւ ընդ Հոգւոյդ քում:*

Ք. *Աստուծոյ երկրպագեսցուք:*

Ս. *Առաջի քո, Տէր:*

Կոչումն Հոգւոյն Սրբոյ

Քահանայն երիցս համբորեցէ զսեղանն՝ ասելով ի ծածուկ.

Ք. *Երկիր պագանեմք եւ աղաչեմք եւ խնդրեմք ի քէն, բարերա՛ր Աստուած, առաքեա՛ ի մեզ եւ յառաջի եղեալ յընծայս յայս՝ զմշտնջենաւորակից քո եւ զէակից սուրբ Հոգիդ:*

Որով զհացս օրհնեալ՝ ✝ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Եւ զբաժակս օրհնեալ՝ ✝ արին ստուգապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Որով զհացս եւ զգինիս օրհնեալ՝ ✝ մարմին եւ արին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ փոխարկելով Հոգւովդ քով Սրբով:

Քարչրացոյցանելով զնուէրսն՝ ասացէ ի չայն.

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանգարտապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Ս. *Ամէն:*

Քահանայն եղեալ ի վայր զնուէրսն՝ կափուսցէ զբաժակն եւ ծուկը կրկնեցէ, եւ ցարածեալ զչէռս՝ ասացէ ի ծածուկ.

✝ *Սովաւ Հնորհեա՛ զսէր, զհաստատութիւն եւ զըզձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից,*

սարկալազաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց եւ որք ի պատերազմունս բարբարոսաց:

Սովաւ եւ օգոց շնորհեա՛ զբարեխառնութիւն եւ անդոց զպտղաբերութիւն, եւ ախտացելոց ի պէսպէս ցաւս՝ փութապէս զառողջութիւն:

Սովաւ Հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ի Քրիստոս զննջեցեալսն՝ զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկալազունս եւ զքնաւ ուխտ եկեղեցւոյ քում սրբոյ, եւ զամենեսեան՝ որք յաշխարհական կարգէ՛ զարս եւ զկանայս Հաւատով վախճանեալս:

Պ չաշն.

Ք. Ընդ որս եւ մեզ այց արասցես՝ բարերար **Աստուած**, աղաչեմք:

Ս. Յիշեա **Տէր** եւ ողորմեա:

Ք. **Աստուածածնին** սրբոյ **Կուսին Մարիամնու** եւ **Յովհաննու Մկրտչին**, **Ստեփանոսի Նախավկային**, եւ սրբոյ **Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին** եւ **ամենայն սրբոց**, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Ս. Յիշեա **Տէր** եւ ողորմեա:

Ս. **Առաքելոց** սրբոց, **մարգարեից**, **վարդապետաց**, **մարտիրոսաց**, եւ **ամենայն Հայրապետաց** սրբոց, **առաքելագործ եպիսկոպոսաց**, **երիցանց**, **ուղղափառ սարկալազաց**, եւ **ամենայն սրբոց**, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դ. Յիշեա, **Տէր**, եւ ողորմեա:

Քահանայն ի քօնակիսն առուրս.

Ս. **Օրհնեալ գովեալ եւ փառաւորեալ**, **Հրաշալի եւ աստուածազարդ Տէրութեան Քրիստոսի**

կամ Աստուածայայտնութեան Քրիստոսի

կամ Յայտնութեան Քրիստոսի

կամ Գալստեան Քրիստոսի

կամ Յարութեան Քրիստոսի

կամ Համբարձման Քրիստոսի

կամ Գալստեան Հոգւոյն Սրբոյ ի դասս առաքելոցն

կամ Պայծառակերպութեան Քրիստոսի

կամ Սուրբ Խաչին Քրիստոսի

կամ Ծննդեան Քրիստոսի

կամ Տէրութեան Քրիստոսի ի Տօնի Փոխման Մօր քո եւ Կուսին

կամ Տերութեան Քրիստոսի ի Տօնի Ծննդեան Մօր քո եւ Կուսին

կամ Տերութեան Քրիստոսի ի Տօնի Ընծայման Մօր քո եւ Կուսին

կամ Տերութեան Քրիստոսի ի Տօնի Անարատ Յղութեան Մօր քո եւ Կուսին

երկիր պագանեմք:

Ս. Փառք Տերութեան քո, Տէր: (կամ...)

Ք. (իսկ ի տօնի սրբոյ). Սուրբ եւ աստուածաձայն մարգարէին (ից), կամ Առաքելոյն (լոց), կամ Հայրապետին (տաց), կամ Մարտիրոսին (սաց), Ա. Ա., որոյ (որոց) այսօր զյիշատակն կատարեցաք, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Ս. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Քահակայն ասացէ ի ծածուկ.

Ք. Յիշեա Տէր եւ ողորմեա. Եւ օրհնեա զսուրբ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի քոյ, եւ ազատեցեր խաչին սրբով, շնորհեա սմա զանշարժ զխաղաղութիւն:

Յիշեա Տէր եւ ողորմեա, եւ օրհնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոստնս, որք ուղիղ վարդապետութեամբ Համառօտեն ի մեզ զբանն ճշմարտութեան:

Պ չաչն.

Ք. Եւս առաւել զՍրբազան Պապն մեր զՏէր (անուն), եւ զերջանիկ Պատրիարքն մեր զՏէր (անուն) եւ զերջանիկ Արքեպիսկոպոսն մեր զՏէր (անուն) շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:

Ս. Շնորհեա Տէր:

Ս. Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ, Տէր Աստուած մեր, վասն սուրբ եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս: Զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցես: Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւս առաւել Սրբազան Պապին մերոյ Տեառն Տեառն (այս անուն) Քաջանայապետի, եւ Գերերջանիկ Պատրիարքին մերոյ Տեառն Տեառն (այս անուն) Կաթողիկոսի, եւ քաջանայիս որ զպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութեան եւ յաղթութեան թագաւորաց քրիստոնէից, եւ իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն Հոգւոյն Հանգուցելոց: Եւս առաւել վասն Հանգուցեալ բարունապետացն մերոց, եւ շինողաց սուրբ Եկեղեցւոյս, եւ որք ընդ Հովանեաւ սորին են Հանգուցեալ: Ազատութիւն եղբարց մերոց գերելոց, եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ Հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն: Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Քահակայն ասացէ ի ծածուկ պաղօթս.

Ք. Յիշեա՛ Տէր եւ ողորմեա, եւ օրհնեա գքո առաջի կացեալ ժողովուրդս, եւ զպատարագիս մատուցողս, եւ պարգեւեա սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն:

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա, եւ օրհնեա զուխտաւորս եւ զպտղաբերիչս եկեղեցւոյ քոյ սրբոյ, եւ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. եւ Հատո նոցա զպարտս նոցա ըստ ընդաբոյս առատութեան քո՝ Հարիւրապատիկ աստ եւ ի Հանդերձելումդ:

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա, եւ գթա ի Հոգիս Հանգուցելոցն, Հանգո՛ զնոսին, եւ լուսաւորեա եւ դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից եւ արժանի արա ողորմութեան քում:

Յիշեա՛ Տէր եւ զՀոգի ծառայի (կամ աղախնոյ) քոյ Ա. Ա. (յիշատակեսցէ զանուն այնր՝ որոյ վասն մատուցանէ զպատարագն) եւ ողորմեա նմա ըստ մեծի ողորմութեան քում, եւ Հանգո այցելութեամբ ի լոյս երեսաց քոց: (Իսկ եթէ կենդանի իցէ, ասացէ). Փրկեա զնա յամենայն որոգայթից Հոգւոյ եւ մարմնոյ:

Յիշեա՛ Տէր եւ զայնսոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս՝ զկենդանիս եւ զՀանգուցեալս. կառավարեա զկամս Հայցմանց նոցա եւ զմերս՝ ընդ ուղղորդն եւ որ լին է փրկութեամբ: Եւ վարձատրեա բոլորեցունց զանանց եւ զերանելի բարութիւնսդ: Եւ զտեալ զխորհուրդս մեր՝ տաճարացո յընդունակութիւն մարմնոյ եւ արեան Միաճնի քոյ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ընդ որում քեզ Հօր ամենակալի, Հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւովդ՝ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շուրց ածեալ զչեռս զրևծայիւք, կողմնակի դարչեալ՝ խաչակնքեսցէ զժողովուրդն, ասելով ի ջայն.

† Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ փրկիչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Ս. Ամէն. եւ ընդ Հոգւոյդ քում:

Քահանայն ցարածեալ զչեռս ասացէ ի ծածուկ.

Ք. Աստուա՛ ծ ճշմարտութեան եւ Հա՛յր ողորմութեան, գոհանամք զքէն, որ ի վեր քան զերանելի նաՀապետացն՝ զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն: Վասնզի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր Հաճեցար անուանել գթալով: Եւ այժմ Տէր աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ ի քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ՝ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ:

Դ. Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ն ջայն.

Ք. Եւ տո՛ւր մեզ Համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ, երկնաւորդ Հայր, երգել եւ ասել.

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց մեր հանապազօրոյ տուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մէք թողումք մերոց պարտապանաց եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ:

Քահանայն զչեսոսն շուրջ ածեալ զրևծայիւք, կողմնս կի դարչեալ՝ խաչակնքեսցէ զժողովուրդն, ասելով ի չայն.

Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

✠ Խաղաղութիւն ամենեցուն:

Ս. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Ք. Աստուծոյ երկրպագեսցուք:

Ս. Առաջի քո, Տէր:

ՎԵՐԱՅՈՒՄ

Քահանայն երկրպագու թեամբ զչեսոս յեցուսցէ ի ճևար սեղանոյն, եւ ասասցէ ի ծածուկ.

Ք. Որ աղբւրդ ես կենաց, եւ բխումն ողորմութեան, Հոգի՛դ սուրբ, ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիր պագանեն Աստուածութեանդ քո: Պահեա՛ զսոսս ամբողջս: Տպաւորեա յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի՝ առ ի ժառանգութիւն եւ ի վիճակ հանդերձելոցդ բարեաց:

Երիցս համբուր թեսցէ զսեղանն, եւ ծուր կրկնեալ՝ ասասցէ ի չայն.

Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով, ընդ որումքեզ՝ Հոգւոյդ սրբոյ, եւ Հօր ամենակալի, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. Պաշխումէ:

Քահանայն կաշեալ զսուրբ նշխարն, վերայուսցէ ասելով.

Ք. Ի սրբութիւն սրբոց:

Ս. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Ք. Օրհնեա՛ ը, Հա՛յր Սուրբ Աստուած ճշմարիտ:

Ս. Ամէն:

Ք. Օրհնեա՛ ը, Որդի՛դ սուրբ, Աստուած ճշմարիտ:

Ս. Ամէն:

Ք. Օրհնեա՛ ը, Հոգի՛դ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Ս. Ամէն:

Քահանայն զսուրբ մարմինն եղեալ ի վայր եւ բացեալ զբաժակն՝ նոյնպէս վերացուցէ եւ զսուրբ արիւնն, ասելով.

Ք. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. Ամէն. Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ: Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանայն ծածուկ.

Ք. Նայեա՛ց, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, յերկնից ի սրբութենէ քումմէ, եւ յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ: Եկ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս եւ աստ պատարագիս: Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ եւ ի պատուական յարենէ, եւ ի ձեռս մեր՝ ամենայն ժողովրդեանս:

Ապա ծուր կրկնեալ համբուրեաց զսեղանն եւ առեալ զՍուրբ Մարմինն, եւ ասացէ ի ծածուկ.

Տէ՛ր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ յանուն Միաձնի Որդւոյ քոյ քրիստոնեայս, եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն Հոգեւոր աւազանան ի թողութիւն մեղաց, եւ արժանի արարեր զմեզ Հաղորդել Սուրբ մարմնոյ եւ արեան Միաձնի քոյ: Եւ այժմ՝ աղաչեմք զքեզ, Տէ՛ր, արա զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն: Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյդ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀՐԱԷԻՐ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Առեալ զսուրբ մարմինն, երկիցս իսաչակրեփեացէ նովաւ ի վերայ բաժակին, եւ կաշեալ զսկիին՝ դարչցի եւ իսաչակրեփեացէ զժողովուրդն, ասելով ի շայն.

Ի սուրբ ✠ ի սուրբ ✠ պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ յերկնից բաշխի ի միջի մերում: Սա է կեանք ✠ յոյս, յարութիւն, քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի ի կառս քերովբեականս:

Ս. Օրհնեալ է Աստուած: Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում: Ալէլուիա: Զմարմին իւր տայ մեզ կերակուր. եւ սուրբ զարին իւր ցօղէ ի մեզ: Ալէլուիա: Մատիք առ Տէր եւ առէք զլոյս. Ալէլուիա: Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. Ալէլուիա:

Քահանայն զսուրբ նշխարն բեկեալ յերկուս մասունս, զագոյ ճեռինն դիցէ ի մաղվմայն՝ ասելով ի ծածուկ.

Ք. Զո՛ր օրհնութիւն կամ զո՛ր գոհութիւն ի վերայ Հացիս եւ բաժակիս ասասցուք. այլ Յիսո՛ւս, զքեզ միայն օրհնեմք՝ Հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ Հոգւովդ. այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Պարջեալ բեկեալ զայլ միւս փոքրիկ մասն ի մասնէն՝ որ ի շախու շեռին, զմեծն դիպէ ի մաղպմայն, ասելով.

Խոստովանիմ եւ Հաւատամ, զի դու ես Քրիստոս՝ Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեզս աշխարհի:

Զփոքրիկն արկիտ խաչակիչ ի բաժակն, ասելով.

Լրումն ✝ Հոգւոյն սրբոյ:

Ս. Գոհութիւն քեզ Քրիստոս:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Զկախարիչն եղեալ ի վերայ սկիոյ՝ ծուկը կրկնեսցէ, եւ շախու մարամբք կաշեալ զսուրբ մասն ի մաղպմային ասասցէ.

Ք. Հայր սուրբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ Միածնի քոյ, եւ լուսաւորեցեր մկրտութեամբ Հոգեւոր աւազանին: Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն: Տպաւորեա՛ ի մեզ զշնորհս Հոգւոյդ սրբոյ՝ որպէս ի սուրբ առաքեալն, որք ճաշակեցին եւ եղեն մաքրիչք ամենայն աշխարհի:

Եւ արդ՝ **Տէր, Հայր բարերար, զհաղորդութիւնս այս մասնաւորեա ճաշակման երեկոյին աշակերտացն՝ բառնալով զխաւար մեղաց իմոց: Մի՛ Հայիր յանարժանութիւնս իմ: եւ մի՛ արգելուր զշնորհս Հոգւոյդ սրբոյ: Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քոյ, պարգեւեա զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց: Որպէս խոստացաւ եւ ասաց Տէր մեր Յիսուս Քրիստոս, թէ՛ որ ուտէ զմարմին իմ, եւ ըմպէ զարին իմ, կեցցէ յաւիտեան: Արդ արա զսա մեզ ի քաւութիւն, զի որք կերիցեն եւ արբցեն ի սմանէ՝ Հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

ՃԱՇԱԿՈՒՄՆ ԵՒ ԲԱՇԽՈՒՄՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Զսուրբ մասնիկն եղեալ ի մաղպմայն՝ ծուկը կրկնեսցէ, եւ դարջեալ առեալ զսուրբ մասունս յագ շեռն ի վերայ մաղպմայի, եւ երկրպագեալ՝ խնդրեսցէ վայրիկ մի սրբի միայն զպէսպէս հայցուածս, եւ քեաննագրեալ լովաւ զիկն ի վերայ մաղպմայի՝ ճաշակեսցէ սհիւ եւ դողութեամբ, ասելով.

Ք. Մարմին քո անապական լիցի ✝ ինձ ի կեանս:

Ս. Ամէն:

Քահանայն ապա բացէ զբաժակն եւ արքիտ ասելով.

Եւ սուրբ Արին քո ի քաւութիւն ✝ եւ ի թողութիւն մեղաց:

Ս. Ամէն: Երկիւղիւ եւ Հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ Հաղորդեցարուք:

Ք. Ասացէք մեղայ Աստուծոյ: Հաւատամ ի Հայր սուրբ Աստուած, ճշմարիտ:

Ս. Ամէն:

Ք. Հաւատամ յՈրդին սուրբ Աստուած ճշմարիտ:

Ս. Ամէն:

Ք. Հաւատամ ի Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ:

Ս. Ամէն:

Ք. Խոստովանիմ եւ Հաւատամ զի սա է ճշմարիտ Մարմին եւ Արին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բառնայ զմեզս աշխարհի:

Ապա խաչակրկեղով սուրբ մասնկանք հաղորդեսցէ ասելով.

Մարմին Տեառն մերոյ Յիսուսի † Քրիստոսի:

Յաւարդք բաշխման, ասէ

Մարմին եւ Արին Տեառն մերոյ Յիսուսի † Քրիստոսի, լիցի քեզ փրկութիւն եւ առաջնորդ յանվախճան ի կեանս. ամէն:

Ս. Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Յաւարդեղն՝ քահանայն եկեսցէ առ սեղանն եւ դարչչի առ ժողոտրդն եւ զայն խաչակրկեցէ մասնաբաշխել ի շայն.

Ք. Կեցո՛ Տէր † զժողովուրդս քո, եւ օրհնեա զժառանգութիւնս քո, Հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա՛ յայսմ ճետէ մինչեւ ի յաւիտեան:

Դ. Լցաք ի բարութեանց քոց, Տէր, ճաշակելով զմարմին քո եւ զարին. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ Հանապազ կերակրես զմեզ, առաքեա՛ ի մեզ զՀոգեւոր քո զօրհնութիւն: Փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ապա արեւալ զգիւնիս որ ի բաժակի՝ արեւսցէ արքայս զմաղղմայն, եւ ի շախ տղգեր սեղանոյ շուսցեալ զմաբունս՝ դարչչի ի մէջ սեղանոյ, եւ արքցէ ասելով՝ ի ծածուկ.

Ք. Գոհանամք զքէն, Հա՛յր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զԵկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի սուրբ Երրորդութիւնդ: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Քրիստո՛ս թագաւոր, որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարարք մարմնով եւ արեամբդ քով սրբով: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Հոգի՛դ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զԵկեղեցի. անարատ պաճեա Հաւատով Երրորդութեանդ յայսմ ճետէ մինչեւ յաւիտեան: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Քրիստո՛ս Աստուած, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան: Սովիմք պաճեա զմեզ սուրբս եւ անարատս՝ բնակեալ զմեօք՝ քո աստուածային խնամօքդ: Հովուեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց եւ բարերարաց: Որով ամրացեալք յամենայն

բանասարկուին ընդդիմութեանց, քումդ եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի: Եւ քեզ միայնոյ քաջայազմ եւ ճշմարիտ Հովուիդ Հետեւել, եւ առ ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքա յութեանդ երկնից, Աստուած մեր եւ Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս: Որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դ. Տէր, ողորմեա:

Ս. Եւ եւս Հաւատով ընկալեալք յաստուածային, սուրբ, յերկնային, յանմահ, յանարատ եւ յանապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:

Դ. Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ, բաշխելով զմարմին եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, եւ կեանք անձանց մերոց:

ԱՂՕԹՔ ԱՐՁԱԿՄԱՆ

Քահանայն համբոյրեալ գտեղանն եւ քարածեալ պէտոս՝ ասասցէ ի ջաշն.

Ք. Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ: Կեցո՛ զժողովուրդս քո, եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո:

Չլրումն եկեղեցւոյ քո պահեա՛: Սրբեա՛ զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ:

Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով: Եւ մի՛ թողուր զյուսացեալսս ի քեզ: Չխաղաղութիւն քո պարգեւեա՛ ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, եւ զինուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժողովրդեանս:

Չի ամենայն տուրք բարիք, եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի քէն, որ ես Հայր լուսոյ: Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ Հետէ մինչեւ յաւիտեան: Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ Հետէ մինչեւ յաւիտեան: Եւ Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ Հետէ մինչեւ յաւիտեան:

Ք. Կատարումն օրինաց եւ մարգարէից, դու ես Քրիստո՛ս Աստուած փրկիչ մեր: Որ լցեր զամենայն Հայրակամ տնօրէնութիւնս քո, լցո՛ եւ զմեզ Հոգւովդ քով սրբով:

Ս. Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Ք. Պահպանեա՛ զժողովուրդս քո, Քրիստո՛ս Աստուած, ընդ Հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւք քով ի խաղաղութեան, փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ

Թշնամուտն: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. *Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:*

Քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն՝ ասելով.

Ք. *Օրհնեալ խաչակնքեցիք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան. ամէն:*



ՊԱՇՏՕՆ ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ

Հասարակեալ. Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուիք ընկալ կեցո եւ ողորմեա:

Ս. *Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուիք. Ընկալ, կեցո եւ ողորմեա:*

Ք. *Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Դ. *Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր Բանդ Աստուած. թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:*

Սաղմոս ՃԻԹ

Դ. *Ալեւուհա. ալեւուհա. Ի խորոց կարգացի առ քեզ Տէր, Տէր լուր ձայնի իմում: Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց:*

Ալեւուհա. Օրթի:

Ճ *Խաղաղութիւն ամենեցուն:*

Դ. *Եւ ընդ Հոգւոյդ քում:*

Ս. *Երկիւղածութեամբ լուարուք:*

Ք. *Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու:*

Դ. *Փառք քեզ Տէր Աստուած մեր:*

Ս. *Պոսիսումէ:*

Դ. *Ասէ Աստուած:*

Ք. *Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:*

Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ Հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արգիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանսն յաւիտենականս պաշտեցէ զնա: Եթէ որ զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր ենն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. եթէ որ զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ: (Յովհաննէս ԺԲ. 24-28)

Դ. Քաճանայք եւ ժողովուրդք Հայցեմք ի քէն Տէր բարեգութ: Ընդ ննջեցեալն Հաւատով ընկալ զմեզ նովին յուսով, յԵրուսաղէմ քաղաք վերին, յորում արդարքն ժողովին. փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին:

Ի վերին Երուսաղէմ ի բնակարանս Հրեշտակաց, ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղանակերպ ի դրախտին Եդեմական պայծառացեալ արժանապէս. ողորմեա՛ծ Տէր, ողորմեա Հուոցն մեր ննջեցերոց:

Ք. Հոգւոցն Հանգուցերոց, Քրիստոս Աստուած, արա Հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ մեղաւորացս շնորհեա զթողութիւն յանցանաց:

Ս. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն Հանգուցեալ Հոգւոցն աղաչեսցուք զՓրկիչն մեր Քրիստոս, զի գնտսա ընդ արդարան դասեսցէ եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Ք. Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա:

Քրիստոս՝ Որդի Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, գլծա քո արարչական սիրովդ ի Հոգիս Հանգուցեալ ծառայից քոց: Մանաւանդ ի Հոգիս (անուն) ծառայի (կամ աղախնոյ) քո: Յիշեա յաւուր մեծի գալըստեան արքայութեան քո: Արա արժանի ողորմութեան քաւութեան եւ թողութեան մեղաց: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն:

Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռերոց: Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. Սուրբ խաչիս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Ք. Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ Հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոցն. արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դ. Հայր մեր, որ յերկինս ես...

Ք. Չի քո է արքայութիւն, եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Դ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Քահանա խաչակնիքերով ժողովուրդք.

Ք. Օրհնեալ † եղերուք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանս. ամէն:



ՄԵՍԵՒԻՔ ՊԱՀՈՑ

ԲՇ. Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. եւ տերութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

ԳՇ. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. երկիւղիւ քո **Տէր:**

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քոյ **Տէր**. զի օրհնեսցես դու զարդարն:

ԴՇ. Կեցո զծառայս քո, **Աստուած իմ**, որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ **Տէր** Համբարձի զանձն իմ:

ԵՇ. Բարձր արարէք զ**Տէր Աստուած մեր**. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Տէր թա գաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

ՈՒԲ. **Տեսին ամենայն ծագք երկրի զիրկովթին Աստուծոյ մերոյ:**

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

ԱԼԵԼՈՒՔ ԶԱՇՈՒ ՊԱՀՈՑ

ԱՁ. Հոգի քու սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Կամ: Վասն անուան քոյ **Տէր** կեցուցես զիս. արդարութեամբ քով Հանցես ի նեղութենէ զանձն իմ:

ԱԿ. **Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս**. եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Կամ: Զգնացս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում. եւ մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք:

ԲՁ. Սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ երկիւղ

մահու անկաւ ի վերայ իմ: **ԲԿ.** Դարձ, **Տէր**, եւ փրկեա զանձն իմ. կե

ցո զիս **Տէր** ըստ ողորմութեան քում: **ԳՁ.** Վասն անուան քոյ **Տէր** քաւեա զմեզս

իմ. զի բազում եղեն յոյժ:

ԳԿ. **Ողորմեա ինձ Տէր**, զի Հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

ԴՁ. Յիշեա **Տէր** զգթութիւնս քո. եւ զողորմութիւնս քո, որք ենն յաւիտենից: **Կամ:**

Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգի տութեան մի՛ յիշեր. այլ յիշեա զիս **Տէր** ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր եւ ուղիղ ես:

ԴԿ. **Տէր**, ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Կամ: **Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան մի՛ յիշեր**. այլ յիշեա զիս **Տէր** ըստ ողորմութեան քում, վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր եւ ուղիղ ես:

Կամ: **Աղաղակեցի առ քեզ Տէր** եւ ասացի. **Դու ես յոյս եւ բաժին իմ յերկրին կենդանեաց:**

ԱԼԵԼՈՒՔ ԶԱՇՈՒ ՄԱՐՏԻՐՈՍԱՅ

ԱՁ. **Տէր** սիրէ զիրաւունս, եւ ոչ ընդ վայր Հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պաշէ զնոսա:

Կամ: Փրկութիւն արդարոց ի **Տեառնէ է**. վերակացու է նոցա ի ժամանակս նեղութեան:

ԱԿ. **Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի Հանգիստս իւրեանց**. եւ բարձր արասցեն զ**Աստուած բերանովք իւրեանց:**

Կամ: **Լոյս ծագեաց արդարոց**. ուղղոց սրտից եղել ուրախութիւն:

ԲՁ. **Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի Հանգիստս իւրեանց**. եւ բարձր արասցեն զ**Աստուած բերանովք իւրեանց:**

ԲԿ. Կարդացին արդարքն առ Տէր, եւ Տէր լուա նոցա. եւ յամենայն նեղութե նե նոցա փրկեաց զնոսա:

ԳԶ. Վասն քո մեռանիմք զօրհանապաղ. Համարեցաք որպէս զոչխար ի զենումն:

ԳԿ. Ուրախ լիցին ամենքեան որք յուսացեալ են ի քեզ. յախտեան ցնծասցեն, եւ բնակեսցես դու ի նոսա:

ԴԶ. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին. որպէս զմայրն Վիբանանու բազում եղիցին:

ԴԿ. Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա Տէր, եւ պաշէ զամենայն ոսկերս նոցա, եւ մի ի նոցանէ ոչ կորիցէ:

ԱԼԵՂՈՒՔ ԶԱՇՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԱԶ. Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիուլի. Ժամանակ գթալոյ նորա Հասեալ է Ժամ:

Կամ. Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է. սաղմնս ասացէք նմա խմաստովեամբ:

ԱԿ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

ԲԶ. Ծափս Հարէք ամենայն Հեթանոսք. աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան: Կամ. Աստուած, դու դարձեալ կեցուցես

զմեզ. Ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ:

ԲԿ. Արի Տէր Աստուած իմ ի հրամանս քո, զոր պատուիրեցեր, եւ ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ. վասն այսորիկ ի բարձունս դարձ Տէր:

ԳԶ. Ուրախ եղև Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիուլի ցնծասցեն ի Թագաւորն իւրեանց:

ԳԿ. Եկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ. որպէս զի աշեղ են խորհրդովք քան զամենայն որդւոց մարդկան:

ԴԶ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո. եւ դարձուցեր զգերութիւն Յակովբայ:

ԴԿ. Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան ամենայն թշնամիք նորա. փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

ԺԱՄԱՄՈՒՏՔ

Չորեքշաբթի եւ Ուրբաթ

Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո Աստուած տուր մեզ Հանապաղ. զքեզ աղաչեմք:

Երկուշաբթի, Երեքշաբթի, Հինգշաբթի

Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ Կուսէս. որ վասն մեր ի յերկնից իջեր, եւ լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր, որ խաղաղութեանց եւ Թագաւոր, զխաղաղութիւն եւ զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

Մարտիրոսաց

Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս Համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիք զկենդանութիւնս մեր խաղաղացո Աստուած որպէս մարդասէր:

Կիրակի

Միաժին Որդի Եւ Բանդ Սատուած, եւ անմահ Էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհոյ Սատուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Սատուած. մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութե նէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն. կեցո զմեզ:

Ծննդեանն

Ա. Սատուածածին ամենօրհնեալ, զԲանն անսկիզբն յղացար եւ զՍատուածն անբովանդակելին ծնար, զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Ծննդեանն

Բ. Սատուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ Եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք Հրանխովք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխեին, կրեցեր անսերմնապէս յանապականումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զՍատուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանձառ զԲանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Տեառնընդառաջի

Ա. Ծերունին այսօր Սիմեովն, Հոգւովն գայր ի տաճարն, երեւելով քերովբէիցն վեհագոյն. որոց թեւօքն սաւառնեալ ոչ իշխեին նայել ի յաշեղ փառացն, սա ի գիրկս իւր բարձեալ Համբուրեր Համարձակապէս. եւ գգուեր որպէս մանուկ. եւ աղերսելով Հայցեր արձակել ի խաղաղութիւն:

Ծաղկազարդին

Ցնծա Երուսաղէմ, եւ զարդարեա զառագաստ քո Սիովն. քանզի ահա թագաւոր քո Քրիստոս նստեալ ի յաւանակի նորոյ՝ Հեղովթիւն ցուցանելով՝ գայ մտանէ յառագաստ քո Սիովն: Եւ մէք աղաղակեմք՝ ուխաննա, օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն, որ ոնի զմեծ զողորմութիւն:

Չատկին

Ա. Քրիստոս յարեալ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Չատկին

Բ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ անձառաբար մարմնացաւ ի կուսէն. խաչի Համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Չատկին

Գ. Քանզի յարեալ ի մեռելոց Քրիստոս Սատուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք Հրեշտակաց, եւ ամենայն զուարթունք երկնից, ընդ որս գոչելով ասեմք. փառք սոսկալի յարութեան քոյ Տէր:

Համբարձման

Ա. Հիացան վերնական բազմութիւնք՝ տեսանելով զքեզ ի Հրեղէն կառս բազմեալ. սարսեալ ասէին. ո՞վ է սա որ դիմեալ գայ Եդովմայ, եւ եկեալ մտանէ փառօք ի փառս. Տէր փառք քեզ:

Համբարձման

Բ. Որ յանպատում յաթոռ նստիս եւ յանմարմնոց վերօրհնիս, անհասանելի Բանդ Սատուած, ի յերկրի երեւեցար ճշմարիտ մարդ. զանօրհնութեան կատարեալ զխորհուրդ՝ խաչի եւ մահու Համբերեցեր. եւ զհրաշալի զյարութիւնդ քո ցուցեր Հզօր զօրութեամբ: Այսօր

Համբարձար փառօք ի յերկինս, եւ զկուսածին զմարմինդ քո Հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Եսայիաս նախաձայնեալ ասէր. Ո՛վ է սա՝ որ դիմեալ գայ յերկրէ: Հիացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. Համբարձէք իշխանք զգրունս ձեր ի վեր, եւ մտցէ թագաւոր փառաց: Այլ որ յամենայնի կարողդ ես եւ Հզօր, շնորհեա եւ մեզ Հանդիպել քեզ ամպովք ի միւս անգամ քո գալստեանդ. որ միայնդ ես մարդասէր:

Հոգեգալստեան

Աստուած զքեզ խոստովանիմք զուրբ Հոգիդ եւ երկիր պագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղերոցս եւ խաղաղարար աշխարհի, որ զոգիտութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր, եւ ի Հրեղէն լեզուս բաժանեալ անճառելէօք ցուցար նոցա. աղաղակեմք Տէ՛ր, խնայեա եւ կեցո զմեզ:

Եկեղեցւոյ

Չխաղաղութիւն շնորհեա Եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ, եւ Հաստատեա ի մի Հաւատ զկաթու դիկէ Եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէ՛ր եւ Աստուա՛ծ. կեցո զմեզ:

Վարդավառի

Երեւի Տէր այսօր աշակերտացն ի Թաբորական լերինն. եւ աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով. արասցուք երիս տաղաւարս, մի Տեառն, եւ մի Մովսիսի, եւ մի Եղիայի: Եւ մեք բանաւոր Հօտքս երգեմք ընդ քոյ ճշմարիտ վկայիցդ. առաքեա ի մեզ զլոյս քոյ շնորհացդ ի քո միւսանգամ՝ գալստեանդ, եւ կեցո:

Խաչի

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զգատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ՝ վառն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի: